

ՕՐԷ ՅՕՐ

(ԵՍԵՄԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ)

1893 թ., փետրւար—մարտ.

Մեծ պասի առաջին շաբաթը ով գիտէ ինչպէս անցկացնելուց լետոյ Գրիգորիէ դը Մոնբազոնը հէնց առաջին կիւրակի օրը ներկայացրեց մի շատ ուսիտակ օպերետ... Ներողութիւն. մեծ պասին օպերետ չեն ներկայացնում, այլ միմիայն կատարում օպերետի՝ թէկուզ բոլոր գործողութիւնները...

*
* *

«Անհող» վրացիները հազար ու մի անգամ ժողովեցին և շատ ու շատ խօսեցին. բայց, վերջ ի վերջոյ իրանց ձեռքը առան իրանց կախեթու նոր կառուցանելիք երկաթուղային գիծը:

Մենք—«խելօք, հեռատես, հաշիւ հասկացող» հայերս թնչ գործ ունինք հալաբնակ տեղերում երկաթուղիներ անցկացնելու և կամ թնչ հալի բան է կոնցեսսիա, ակցիոներական ընկերութիւն... Փառք Աստուծոյ՝ նաւթը կալ, «Ֆոնտանը կխփի» ու դուն իս իմ պարուն՝ փողերը հա մօդ արա, հա մօդ արա...

*
* *

Այս օրուայ, փետրւար 14 հայոց բարեգործական ընկերութեան ժողովի նիստին կարդացեց ընկերութեան խորհրդի քարտուղար Հ. Առաքելեանցի առաջարկութիւնը «քննիչ» ուղարկել Գորի և Ախալցխա գործւած «զեղծումները» առիթով:

Թատրոնական ժողովին հուշակամ մէկը որը իւր հակառակորդներին ասում էր թէ «Դուք ով էք... Ձեզ ով է կանչել պատեղ... Ինչու համար էք եկել պատեղ... Ձեր փողերը մեզ հարկատու չեն» և այլն, այս ժողովում էլ իւր այդ «վարենի» արշինով չափեց «լուսաւորութեան կենտրոնից» դուրս գտնուող գաւառացիներին: Վախ չպատնելով թէ «ով գիտէ ինչպէս

են ընդունելու գաւառացիները մեր «քննիչին» վերոլիշեալ մէկը քիչ էր մնում առաջարկի, որ «քննիչին» ուղեկցի մի լաւ սպառազինւած գունդ մի ծանր արտիլերիայի պաշտպանութեամբ և մի անվեհեր Նապոլէոնի հրամանատարութեամբ:

*
* *

Նորն ժողովին շարաքաստիկ «զեղծումների» և աւելի ևս շարաքաստիկ «քննիչի» մասին վիճաբանելիս—ամեն քը ապշած մնացին պ. Հ. Առաքելեանցի փաստաբանական բազմակողմանի ձիրքից:

«Շատերը ալտեղ, ասաց նա, երևակալուած են թէ «զեղծում» և «քննիչ» բառերը պէտք է անպատճառ ընդունւած մտքով հասկանալ... Իսկի էլ չէ... Նի՞՛ք էս ասում եմ «զեղծում», «քննիչ», այդ խոսմ չի նշանակում թէ խօսքս անպատճառ և միմիայն «զեղծումների» և «քննիչի» մասին է: Ոչ, զեղծումի տեղ պէտք է հասկանալ «թեթեւ շեղում», իսկ քննիչի տեղ «կանոնների մեկնող, բացատրող...»:

*
* *

Հալոց թատրոնի պատմութեան սպազալ կազմողը պիտի օգտուի նորագոյն չափնութիւններից («Նոր-Նար», № 27) և իւր աշխատութեան մէջ մեծ տեղ շնորհի հետեւեալ երեք փալուճ և անմոռանալի անուններին: Նախ և առաջ:

1) Ջալալեան Սարգիս և պիսկոպոսին, որը «առաջին անգամ թատրոն տեսնելով, ալտպէս ասած իւր ներկայութեամբ օրհնեց հալկական թատրոնի հաստատութիւնը և խաւար ժողովուրդը անսնելով, որ սրբազանը վայելչութիւն է ստանում, ընկանօրէն մակարեքեց թէ՛ եթէ սրբազանը գնում է, բաս լաւ բան է, հօգու շահ է»:

Ապա 2) Բ ժ ի շ կ Մ ի ս ա կ Ա Ր ա մ ե ա ն ց ի ն, որը՝ չիշեցնելով «Հալոց թատրոնի պատմութեան մէջ մի մոռացւած անձնաւորութեան» մասին, վիշեցրեց ա կ ա մ ա լ ի ց և իւր անունը: «Իմնաղիտնում, ասում է նա, (1864 թ.ականից) ներկայացնում էինք թեթեւ կատակերգութիւններ, համալսարանում (մինչև 1872 թ.) պատմական պիեսներ. բողոքի մէջ առաջին դերը ես էի կատարում: Ինչքան օգուտ էր տալիս աչդ ներկայացումը, գիտէ նա ով որ ուսանող է եղել և երիտասարդ (?). բարոյական (!) գեղարւեստական (!?) վայելչութիւն (!!) ամենքին, նիւթական ձեռնտութիւն կարօտեալներին»:

Եւ վերջապէս 3) Ենիկոլոպեանին, որը 1892 թ. սեպտին ցրեց «թատրոնական կոմիտետը» չանձն առնելով «բարեգործական նպատակով» մեն մենակ տանել թատրոնի գործը, բալց որը՝ տեսնելով թէ իւր գրպա

նին շատ մեծ դեֆիցիտ է սպասում—մոգոնեց, էլի՛ բարեգործական նպատակով, հալոց թատրոնի 35 ամեակը և... կարգի բերեց իւր հաշիւները հասարակութեան հետ:

Արաբիտով ստացում է մի տրիօ՝ բաղկացած 1) մի եպիսկոպոսից, որը «օրհնեց հաշկական թատրոնի հաստատութիւնը», 2) մի բժիշկից, որը ամեն տեսակ դերեր կատարելով կատակերգութիւնների և պատմական պիեսների մէջ—«գուրս հանեց հալոց թատրոնի գաղափարը մասնաւոր շրջաններից ու դարձրեց մի ընդհանուր գործ, որով (ուշագրութեամբ լեցէ՛ք) նորագուն ժամանակի հաշերը ստացան մի զօրաւոր կրթական «բարեգործական հաստատութիւն» և 3) մի զինւորականից, որը նշանաւոր հռչակեց իւր մոգոնաբանութեամբ:

*
**

«Արձագանք»-ը (№ 21, փետրւար 19) «ընդարձակ փիլիսոփայական տրակտատներով» փոխարէն զետեղեց իւր երեք համարներում 15—20 սիւնեականոց «մանրամասնօրէն կազմած» մի ֆոտոգրաֆիական պատկեր—արձանագրութիւն Բարեգործական Ընկերութեան փետր. 14 ընդհանուր ժողովի նստի մասին—ցոյց տալու համար հասարակութեանը թէ ի՞նչ բարոյական դրամագլուխ է ներկայացնում բազմաթիւ ճիւղեր ունեցող ընկերութեան գլխաւոր ղեկավար մարմինը—ընդհանուր ժողովը, թէ ի՞նչ է իրերի դրութիւնը և որն է «գործիչների զարգացման աստիճանը»:

Նոյն ընկերութեան ընդհանուր ժողովը փետրւար 21 իւր նստին վճիռ էր կապցնում իւր կողմից «Արձագանք»-ի խմբագրի Վարդապետի հրամանագրով հրահանգելու մասին,—երբ լանկարծ, ով զարմանք, տեղիցը վեր է կենում պ. Փիլիպպոս Վարդանեանը և ասում.

«Յանուն լրագրութեան ազատութեան և բարձրաձայն բողոքում եմ ժողովիս կապցնելիք այն վճռի դէմ, որով կամենում են իսխտել մամուլի ազատութիւնը. այո՛, ևս բողոքում եմ այդ վճռի դէմ»:

Ախր, պ. Վարդանեան, երբ որ վճիռ են կապցնում մի բան հերքել հէնց մամուլի միջոցով—ի՞նչպէս է խախտում մամուլի ազատութիւնը, Ախր, ինչո՞ւ էք անհեթեթութիւններ պաշտպանում և դրանով իրաւունք տալիս ձեր սիրած «Արձագանք»-ին խօսելու ընդհանուր ժողովին մասնակցող գործիչներին զարգացման աստիճանի մասին?

*
**

Բոլոր կենդանիներից քամելե՞ծն է, որ իւր կաշու գոյնը 1001 անգամ փոխում է չարմարելով օդին, եղանակին, տրամադրութեան և այլն:

Մեզանում «Արձագանք»-ն է, որ իւր կաշու նրբազգացութեամբ և գունափոխութեամբ կարող է լաջողութեամբ մրցել քամելէոնի հետ:

Նրէկ նա խօսք չէր գտնում մէկին անւանարկելու,—ալսօր նրա մտերիմ դաշնակիցն է:

Մէկէլ օրը ինչ ասես չը թափեց նա հալ վաճառականների գլխին, և՛ «հալ ազգի կատաղի թշնամի, և հալ ազգի ամենավտանգաւոր, ամենաանխիղճ, ամենաբարբարոս թշնամի, և ժողովրդի ցեց, և ձրիակերներ, և մանականդ զղւելի՛» ճանապարհորդութեան ժամանակ, և ապականւած, և կեղտոտ մարմին» և ալլն, և ալլն,—իսկ ալսօր, փետրւար 28, («Արձագանք» № 25) նա նրանց խնկարկում է և ծնկաչոք արևելեան շողոքորթութիւններ անում:

«Ո՞ւր են, բացականչում է նա, Չիթախեանները, Մանթաշեանները, Փիթոպեանները, Փրիդոնեանցները, Ռօտինեանցները, Միրիմանեանցները, Շադինեանցները, որոնց (ուշադրութեամբ լսեցէք) կը պատկանէր խօսքն ալնալիսի ժողովներում, ինչպիսի են բարեգործական և հրատարակչական ընկերութեանց ժողովները...»

—Իէ, ի հարկէ, հիմա, երբ մօտենում են ձալնաւորների նոր ընտրութիւնները դումալի համար—ալնալիսի ընկերութեանց ժողովներում ինչպիսի են բարեգործականը և մանաւանդ հրատարակչականը, խօսքը անպատճառ պիտի պատկանի դումալի լիշեալ ձալնատէր հարուստներին և ձալնատէր իշխաններին, որպիսիք են՝ Արդութեաններ, Բէհրուպեաններ, Բէկտաբէկեաններ և ալլն:

*
* *

Օրւալ խնդիրը դուման է, դումալի ապագալ ընտրութիւնների համար ներկալ նախապատրաստութիւնները:

Օրւալ հերոսներն են կուաղի (իբր) կուսակցութիւնների պարագլուխները. մի կողմից Նիկոլալ Յակովլեվիչ Նիկոլաձէ և ընկերութիւն, միա կողմից—Աքգար Յովաննիսեան, իշխան Կ. Բէհրութեան և ընկերութիւն:

Կար ժամանակ—1875 թւականներին, երբ իշխան Կ. Բէհրութեանը Թիֆլիսում հրատարակում էր սեփական օրգան ռսերէն լեզուլ և ալլ երանելի ժամանակներին նրան աշխատակցում էր և Նիկոլալ Յակովլեվիչը: Ալն ժամանակ նոքա գործում էին միասին, մէկը գրում էր միւսը խմբագրում:

Բայց ալլ ժամանականից դէսը շատ ու շատ բան է փոխել և նախկին բարեկամները չարակամներ են, կամ աւելի ուղիղն ասած, հակառակորդներ են դառել:

Մէկը, ալն է պ. Նիկոլաձէն, «Նովոէ Օբոդրենիէ»-ի մէջ, լողածներ

է գրում «Դրսից» վերնագրով ¹⁾ ուր առանց քաշելու պատմում է իւր ասածները, արածները, անելիքները Եւրոսի գործերի վերաբերմամբ: Միւսը, ալն է իշխան Կ. Բէհրուդեանը, «Արձագանքի» նախկին աստուածարանը, աշխատում է համոզել թէ ինքը վաղուց է ինչ «հրաժարելով հրաժարել» է հասարակական գործերից, թէն խոստովանում էլ է որ ինքն է հեղինակը ալն ֆելիետոնների ուր, ի շարս ալլոց, ասում է թէ «քուժավիտցիները և զարարաղցիները ոչ խարներ են, թէ դրանց ամեն մէկի գլուխը արժէ ոչ աւելի քան մի արասի» և ալլ ալսպիսի անմեղ հանաքներ, որ և «Արձագանք»-ը տպագրել էր, քանի որ ալսպիսի հանաքներ չէ որ ընդդէմ չեն հալ «եղբայրական միութեան» սկզբունքներին:

Ինչ և է, դումալի նոր ընտրութիւնների առիթով նախկին բարեկամները իրար դէմ են սրել իրանց գրիչ թրերը և դրանցից աւելի թաքարիւնը—պ. Նիկոլաձէն, մեղագրելով ուրիշներին, որ սրանք «չեն կարողանում զսպել իրանց մանր մոճր կրքերը» ալն դէպքերում, երբ հարկաւոր է մարտնչել զուտ զաղափարական պլատֆորմ—ծրագրերի իրագործման համար,—ինքը ալն աստիճան է կուրանում իւր մանր մոճր կրքերի ազդեցութեան տակ, որ ահա թէ ինչ խօսքեր է ուղղում դումալի ձեռքով (սանխտարական լանձնաժողովի օգնութեամբ) ընտրած 7 հոգի նոր քաղաքալին սանխտարական բժիշկներին հասցէին ²⁾. «Արժես դիտմամբ ու պրաւաւ նախապատուութիւն է տւել ալն պիսի անձերին, որոնք թերևս շատ չար գելի են բոլոր միւս տեսակէտներին, բաւց որոնք, ժամանակակից բժշկական գիտութիւնից նոյն քան են հօտ առել, որքան ևս ու դու, ընթերցող» «Ամեն մի բժիշկ», շարունակում է, պ. Նիկոլաձէն, «բժիշկ չէ», ալ միալն նա է բժիշկ, կաւելացնեմ ևս, որը բացի համալսարանական դիպլոմներից ձեռք բերած կը լինի նաև մի առանձին դիպլոմ ապլոմբաւոր պ. Նիկոլաձէից, որը քաջ տեղեակ է ժամանակակից բոլոր գիտնականների ամենանորագուն թէօրիաներին...

¹⁾ «Со стороны»—աւելի ուղիղն է՝ «կողքից»:

²⁾ «Новое Обозрѣніе» № 3163: